ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԴԵՄ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ (V Դ. ՎԵՐՋ ԵՎ VI Դ. ՍԿԻԶԲ)

Վ. Կ. ԻՍԿԱՆՅԱՆ

Մարզպանական Հայաստանի 492—499 թթ. ապստամբությունը Պարսկաստանի դեմ միջնադարյան հայ ազատագրական նշանավոր շարժումներից է, որը, սակայն, անհրաժեշտ ուշադրության չի արժանացել պատմաբանների կողմից։ Այն համառոտ քննարկման են ենթարկել Մ. Չամչյանն իր «Պատմութիւն Հայոց» գրքի երկրորդ հատորում, իսկ վերջերս՝ ակադ. Ս. Տ. Երեմյանը «Ուրվագծեր ՍՍՀՄ պատմության (III—IX դդ.)» գրքի՝ իր գրած «Քաղաքական փոխհարաբերությունները Սասանյան Իրանի, Բյուզանդիայի և Հայաստանի միջև V—VI դդ. սահմանագլխին» ենթագլխի մեջ[1]։ Պատմական աշխատություններում կամ միանգամայն անտեսվել է այդ ապստամբությունը կամ, լավագույն դեպքում, նրա մասին խոսվել է հարևանցի կերպով։ Ավելին. Մ. Օրմանյանի ասելով, քանի որ հայ պատմիչների մոտ այդ մասին ակնարկ չկա, ուստի, ասորի աղբյուրի հաղորդածը շփոթություն է մարզպանությունից առաջ տեղի ունեցածի հետ։ Նման ապստամբություն լինելու դեպքում պարսիկները Վահան Մամիկոնյանից հետո մարզպանությունը նրա Վարդ եղբորը չէին տա[3]։ Այս տեսակետը համոզիչ և հիմնավորված չէ։ Կան շատ ապստամբություններ, որոնց մասին հաղորդող պատմիչները եզակի են (Պրոկոպիոսը՝ Զենոն կայսեր դեմ Սատրապական Հայաստանի և Հուստինիանոսի դեմ՝ Մեծ Հայքի, իսկ «Սեբեոսի պատմությունը»՝ Մորիկ կայսեր դեմ Վահևունի նախարարների գլխավորությամբ տեղի ունեցած ապստամբությունների մասին)։ Ընդհանրապես սխալ կլինի կարծել, թե հայկական աղբյուրներով մեզ է հասել հայ ժողովրդի անցյալի բոլոր իրադարձությունների պատմությունը։ V դարի վերջի ապստամբությունը ոչ միայն ըստ ժամանակի, այլև ընդհանրապես դեպքերի զարգացման իր ամբողջ ընթացքով ամենևին նման չէ հայերի նախորդ որևէ ելույթին։ Վերջապես, Վահան Մամիկոնյանը մարզպանի պաշտոնը ձեռք էր բերել ոչ թե Տիզբոնի արքունիքի ողորմածությամբ, այլ, ինչպես աղբյուրներն են հաղորդում, բռնի ուժով և «իր քաջությամբ»[4]։ Այդ պաշտոնը նրա եղ-

---

1 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Բ, էջ 230—235։ «Очерки истории СССР (III—IX вв.)», М., 1958, էջ 209—212։

2 Ստ. Պալասանյան, Պատմութիւն Հայոց սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1890, էջ 213։ Թ. Նեոլդեքե, Պատմութիւն Սասանյան տերության, Վաղարշապատ, 1896, էջ 45։ Կ. Տեր-Մկրտչյան, Հայոց եկեղեցւոյ պատմութիւն, մաս Ա, Վաղարշապատ, 1908, էջ 183—184։

3 Մ. Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 499—500։

4 «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 25։ Տե՛ս նաև Մելիք-Թեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, Երևան, 1934, էջ 41։

բորը մերժելը կարող էր պարսկական տիրապետության դեմ նոր դժգոհություններ և բարդություններ առաջացնել Հայաստանում։

Պրոֆ. Լեոն, որն իր «Հայոց պատմության» երկրորդ հատորում մանրամասն և դեղեցիկ կերպով շարադրել է 481—484 թթ. Մարզպանական Հայաստանի ապստամբությունը Պարսկաստանի դեմ, մեզ հետաքրքրող կարևոր խնդիրը ուսումնասիրելու փոխարեն դժբախտաբար սահմանափակվել է լոկ դժգոհություն հայտնելով նրա մասին հայկական պատմիչների պահպանած լռության և «օտար աղբյուրների հաղորդած կցկտուր տեղեկությունների» կապակցությամբ[5]։

Ակադ. Հ. Մանանդյանը Արևելյան Հայաստանի 572 թ. ապստամբությունը Պարսկաստանի դեմ անվանում է «հայերի III ապստամբություն»[6], այսինքն առաջինը՝ 450—451 թթ., երկրորդը՝ 481—484 թթ.։ իսկ սրան հաջորդածը (492—499 թթ.), այդպիսով, մեջտեղից վերանում է, ուստի և դուրս է մնացել անվանի պատմաբանի աշխատություններից։

Միջնադարյան հայ ազատագրական այդ կարևոր շարժման պատմությունը, այդպիսով, կարոտ է պատշաճ ուսումնասիրման և գնահատման։ Սույն հոդվածը մի փորձ է՝ նվիրված այդ նպատակին։

Մարզպանական Հայաստանի հաղթական ապստամբությունը (481—484) Պարսկաստանի դեմ մեծ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի ազգային ինքնուրույն գոյության և ներքին ինքնավարական իրավունքի պահպանման համար։ 484 թ. Նվարսակի դաշնագրով, ինչպես հայտնի է, Պարսկաստանը հրաժարվում է կրոնական բռնադատությունից, Հայաստանում պահպանվելու էր տոհմիկության իրավունքը, խրախուսվելու էր լավը և երկրի գործերն անձամբ տնօրինելու էր Թագավորը[7]։

Ստեփանոս Ասողիկը (XI դ.) այդ պայմանագրից հետո Հայաստանի սպարապետ և մարզպան Վահան Մամիկոնյանին խաղաղ կառավարում է վերագրում, որ վերաշինելով ավերված երկիրը և «բարվոք վճարեալ՝ թողու փոխանակ իւր գեղբայր իւր զՎարդ պատրիկ՝ ամս դ»[8]։ Հայաստանում, իրականում, ինչպես ցույց են տալիս միանգամայն վստահելի փաստերը, կառավարումը ամենևին էլ հանդիստ ու խաղաղ չի եղել։

Նվարսակի դաշնագիրը երկար չի պահպանվում։ Վաղարշ Թագավորը դրժոդհ մոբերի կողմից կուրացվում է. գահակալում է Պերոզի որդի Կավատը (488—531), որը երկիրը կառավարում է միանձնյա և կամայական կերպով։ «Այդ Կավատը, — ասում է Թեոփիլակտոս Սիմոկատան, — դեպի սպանությունները հակված, արյունոտ մարդ էր և ուժով էր գրավել իշխանությունն ու պարսկական թագավորությունը դարձրել էր բռնապետություն»[9]։

Կավատը իր նախորդների նման համաձուլման քաղաքականություն է վարում Հայաստանում։ Նա հայերի վրա գործադրում է կրոնական բռնադատություն։ Պարսկաստանը, մաղդեղականություն պարտադրելով, միշտ էլ նպա-

---

5 Լեո, Հայոց պատմություն, հատ. Բ, Երևան, 1947, էջ 133։

6 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 16։

7 Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1901, էջ 161—162։

8 Ստեփանոս Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 82։

9 Theophylactt Simocattae, Histortarum, Bonnae, 1834, էջ 171։

տակ է ունեցել ոչնչացնել հայոց խիստ ազդեցիկ քրիստոնեական եկեղեցին և բյուզանդական ազդեցությունը Հայաստանում ու հայ ֆեոդալական բոլոր խավերին սերտորեն կապել պարսից պետության հետ[10]։ Կավատի կրոնական հալածանքի մասին որոշակի տեղեկություններ կան աղբյուրներում և ամենից առաջ՝ Եսու Եղեսացու մոտ[11]։ Կավատը, ըստ այդ ժամանակագրի, Հայաստան է ուղարկում զորք և շատ մոգեր, որոնք նրա հրամանով երկրում կառուցում են ատրուշաններ և հայերին հարկադրում հրաժարվել քրիստոնեությունից ու ընդունել զրադաշտականություն[12]։ Նույն աղբյուրի վկայությամբ, Անաստաս կայսեր գահակալման շրջանում (491—518), երբ Կավատը նրանից դրամ է պահանջում, արդեն առկա էր հայերին կրոնական բռնադատության ենթարկելու փաստը։ Պարսկաստանում այդ ժամանակ տարածվել էր Մազդակի կրոնա-փիլիսոփայական նոր վարդապետությունը, որը սերտորեն կապված էր մանիքեության և զրադաշտականության հետ։ Բայց Մազդակը միաժամանակ քարոզում էր կանանց և ունեցվածքի հավասար բաշխում մարդկանց միջև, անձնական սեփականության և ընտանիքի վերացում։ Կավատը պարսկական ազդեցիկ քրմությանը և ազնվականությանը թուլացնելու համար պաշտպանել է մազդակյաններին և ձգտել է նրանց կրոնական նոր ուսմունքը տարածել նաև Մարզպանական Հայաստանում[13]։

Կավատի կողմից հայերի կրոնական հալածանքի մասին, ճիշտ է, անուղղակի կերպով տեղեկություններ կան նաև հայկական աղբյուրներում։ Նվարսակի դաշնագրով, ինչպես գիտենք, քրիստոնեությունը ճանաչվել էր հայերի միակ օրինական կրոնը և արգելվել էր նրա հալածանքը։ Կավատը, սակայն, հրամայել է. «Իւրաքանչիւր ոք զիւր հաւատս կալցի, և զՀայս նեղել ոք մի՝ իշխեսցէ. ամենաքին մեր ծառայք են, մարմնով մեզ ծառայեսցեն, իսկ վասն հոգւոցն, որ զհոգիսն դատի՝ նա գիտէ»[14]։

---

10 Ա. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատ. I, Երևան. 1939, էջ 111։

11 Ասորի Եսու Եղեսացին իր ժամանակագրությունը սկսում է Զենոն կայսրից (474—491) և հասցնում է մինչև 506 թ.։ Նա ակնհայտես է իր նկարագրած դեպքերին։ «Նրանց մի մասը, — ասում է Եսուն, — ես գտել եմ հին գրքերում, մի մասն իմացել այն մարդկանց հետ հաղորդակցելով, որոնք որպես դեսպաններ ուղարկվել են երկու թագավորների մոտ (Անաստաս կայսեր և Կավատի — Վ. Ի.), մնացածը՝ նրանցից, ովքեր իրենք են եղել այդ դեպքերի մեջ» (տե՛ս Н. Пигулевская, Месопотамия на рубеже V—VI вв., М.—Л., 1940, էջ 137)։ Նրա ժամանակագրությունը, ակադ. Վ. Վ. Ստրուվեի գնահատմամբ, «հազվագյուտ ասորական աղբյուր էր» (նույն տեղում, առաջարանը)։ Պրոֆ. Ն. Պիգուլևսկայայի ասելով, «Եսու Եղեսացուն պետք է համարել արժանահավատ, ճշմարիտ աղբյուր» (նույն տեղում, էջ 81)։ Այն մեզ է հասել Դիոնիսիոս Տելմահարցու ժամանակագրության հետ միացած, ուստերեն է թարգմանել ասորերենի և ասորական աղբյուրների հմուտ գիտակ պրոֆ. Ն. Պիգուլևսկայան (նույն տեղում, էջ 130—170)։ Եսուն Կավատի դեմ Արևելյան Հայաստանի ապստամբության պատմության թեև համառոտ, բայց միակ աղբյուրն է։

12 Нешу Стилит, էջ 135, հմմտ. Մ. Ջամչյան, նշվ. աշխ., էջ 230։

13 Ф. И. Успенский, История Византийской империи, т. I, էջ 353։ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մաս Բ, էջ 12։

14 Սեբեոս, Պատմութիւն, էջ 122—123, 125, հմմտ. Ստ. Ասողիկ, էջ 92—93, 97։ Սեբեոսի մոտ Կավատը ներկայացված է նաև այլ կերպ. նա հաջորդում է Պերոզին, հայերի հետ կնքում է հաշտություն, Վահան Մամիկոնյանին կանչում է Տիզրոն, մեծարում և մարզպանություն տալիս (էջ 26)։ Այդպիսով, պատմիչը, ինչպես իրավացիորեն նկատել են, ակնհայտորեն Կավատին շփոթել է պարսից Վաղարշ թագավորի (484—488) հետ (Կ. Կոստանյանց, Հիւսուած բանից նախնի պատմագրաց Հայոց, գիրք երրորդ, Վիեննա, 1877, էջ 183, ծանոթ.)։

Պարզ բան է, որ եթե 484 թ. հետո Հայաստանում կրոնական ճնշում գործադրված չլիներ, ապա Կավատի նման հրովարտակն անիմաստ կլիներ։

Կավատի օրոք, ինչպես ցույց են տալիս փաստերը, ընդհանրապես խիստ ծանրացել է պարսկական տիրապետությունը Հայաստանում։ Հայերը, կրոնականից բացի, ենթարկվել են նաև բռնմապիսի այլ կարգի ճնշումների։ Այդ տեսակետից վերին աստիճանի կարևոր է Թովմա Արծրունու հետևյալ տեղեկությունը. «Յերկարեալ վտանգ նեղութեան Հայոց, որպէս ցուցանեն բազումք ի պատմագրաց, մինչ ի ժամանակս Ջամասպայ և Կաւատայ, մինչ ի Խոսրով արքայ։ Եւ նախարարքն Հայոց կրէին կիրս ծանրաբեռինս ի զէն և ի ճակատամարտ»[15]։

Ուրեմն, Թովմա Արծրունու ձեռքի տակ, ինչպես վկայում է ինքը, եղել են վաղ ժամանակի շատ պատմիչների գործեր, որտեղ հանգամանորեն խոսվել է Ջամասպ և Կավատ թագավորների օրոք Հայաստանում գործադրված պարսկական անասելի ծանր ճնշումների մասին, աղբյուրներ, որոնցից շատերը մեզ չեն հասել։ Պատմության անցյալի փորձից հայտնի է, որ հայ ժողովուրդը պարսկական տիրապետության «ծանր բեռն» ամենևին էլ անտրտունջ կերպով չի կրել և սաստկացող ճնշումներին միշտ պատասխանել է ապստամբությամբ թե՛ Հազկերտ Բ-ի, Պերոզի և թե՛ Խոսրով Ա-ի օրոք։ Իսկ մի՞թե Ջամասպի և Կավատի ճնշումներն անպատիժ են մնացել՝ կազմելով բացառություն։ Ահա այստեղ է, որ հարցին հանգամանորեն պատասխանում և մեզ հասած այժմյան հայկական աղբյուրների բացը լրացնում է տվյալ դեպքերին ժամանակակից ասորի Եսու Եղեսացին։

Պարսկական սաստկացող ճնշումները Հայաստանում նորից են ստեղծել լարված դրություն և ի վերջո հանգեցրել ապստամբության (492 թ.)։ «Նրանք (հայերը — Վ. Ի.), — վկայում է Եսու Եղեսացին, — ամրացան, զորեղացան և ավերեցին կրակատները, որոնք պարսիկները կառուցել էին նրանց (հայերի — Վ. Ի.) երկրում և սպանեցին իրենց մեջ եղած մոգերին»[16]։

Հայերը ձգտում են օգտվել Պարսկաստանի ծանրացող վիճակից։ Հանգիստ չէր նրա ներքին և արտաքին դրությունը։ Կավատը դահակալել էր հոների օգնությամբ, որոնց խոստացել էր հարկ վճարել, մինչդեռ թագավորական գանձարանը դատարկ էր։ Ջէին դաղարում դահակալական երկպառակությունները արքունիքում։ 492 թ. Կավատի դեմ ապստամբում են քուրմերը և ազնվականները՝ նրան տապալելու համար։ Արտաքին հարաբերություններում սրվում են հակասությունները Բյուզանդիայի հետ։ Հայերը, օգտվելով պարսիկների կրած այդ դժվարություններից, տապալում են նրանց տիրապետությունը և պարզում անկախության դրոշ ու կազմակերպում են ապստամբական բանակ թշնամու հարձակումը ետ մղելու համար։ «Կավատը, — շարունակում է ժամանակագիրը, — զորքով նրանց դեմ ուղարկեց մի մարզպանի՝ պատժելու և կրակապաշտ դարձնելու համար։ Հայերը պատերազմեցին նաև նրա դեմ, ջախջախեցին նրան ու նրա բանակը»[17]։ Հաղթանակը ցույց է տալիս, որ ապստամբությունը եղել է բավական կազմակերպված և կրել է ժողովրդական-ազատագրական բնույթ։ Ապստամբների մեջ տիրել է միարանություն և

15 Թովմա Արծրունի, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 144—145։

16 Иешу Стилит, էջ 135։

17 Նույն տեղում։

համերաշխություն, որը հանգեցրել է հաղթանակի, իսկ վերջինս իր հերթին մեծ խանդավառություն է առաջացրել երկրում, նոր թափ հաղորդելով շարժմանը։

Հայերին հետևում է վրացիների, Հայկական Տավրոսի լեռնային և Միջագետքի արաբական ցեղերի ապստամբությունը։ Բայց հայերը և վրացիները պարսիկների դեմ ազատագրական պայքար են մղում ուժերի խիստ անհավասար դասավորությամբ։ Նրանք հանդես էին եկել Սասանյան Պարսկաստանի դեմ, որը մեծ ու հզոր տերություն էր, որից սոսկ սեփական ուժերով հաղթանակ ձեռք բերելն, այնուամենայնիվ, հեշտ չէր։ Ապստամբների այդ վիճակը նրանց ստիպում է դիմելու որևէ արտաքին, մանավանդ հարևան դավանակից Բյուզանդիայի օգնությանը, որը Պարսկաստանի անհաշտ թշնամին էր։ Ուստի, հայերը, ասում է ժամանակագիրը, ջախջախելով պարսիկներին, անմիջապես «դեսպաններ ուղարկեցին մեր (Անաստաս — Վ. Ի.) կայսեր մոտ, որ իրենք նրան են հպատակվում»[18]։ Կայսրությունը սակայն ապստամբների նկատմամբ գրավում է միանգամայն չեզոք դիրք, որը բխում էր տվյալ ժամանակ նրա ներքին ու արտաքին, մասնավորապես Մերձավոր Արևելքում գոյություն ունեցող դրությունից։

Անաստաս կայսրը[19] հինգ տարի պրաղվել էր գահակալական երկպառակությունները և իսավրների խռովությունները վերացնելով։ Այնուհետև նա անընդմեջ պատերազմներ է մղում Դանուբից հարձակվող քոչվոր ցեղերի դեմ։ 493, 499, 502 թթ. բուլղարները ներխուժում են Թրակիա, և բյուզանդական զորքը կրում է ծանր պարտություն։ Թրակիան, Կ. Պոլսին հարող այդ կարևոր պրովինցիան, փաստորեն մի քանի տարի շարունակ մնում է անպաշտպան[20]։ Կայսրը մայրաքաղաքը պաշտպանելու համար կառուցում է 50 կմ երկարությամբ «Երկար պարիսպը»։ Եկեղեցական վեճերի հետևանքով Կ. Պոլսում տեղի է ունենում ապստամբություն, որը սպառնում է գահազրկել կայսրին։ 499 թ. հրդեհից այրվում է մայրաքաղաքի կենտրոնական մասը[21]։

Անաստասի օրոք լարված էին հարաբերությունները Պարսկաստանի հետ։ 491 թ. Կավատը կայսրից պահանջում է վճարել 363 թ. դաշնադրությամբ նախատեսվող տարեկան դրամական գումարը քոչվոր ցեղերի դեմ կովկասյան լեռնանցքների պաշտպանության համար[22]։ Կայսրը Կավատի դեմ ձգտում է օգտագործել ստեղծված եկեղեցական լարված վիճակը Պարսկաստանում և հայերի ապստամբությունը։ Նա, տեղեկանալով, որ Կավատը երկրում վերականգնել է զրադաշտականությունը «և որ նա չարիք է գործել իր հպատակ

18 Նույն տեղում։ Ըստ Մ. Չամչյանի հայերը Բյուզանդիա դեսպանություն են ուղարկել 495 թ. (տե՛ս նշվ. աշխ., էջ 231)։

19 Այս կայսեր կառավարման առանձին ուսումնասիրությունը տե՛ս A. Rose, Kaiser Anastasius I, Erster Theil: Die äussere Politik des kaisers, Halle a. s., 1882. Նույնի Die byzantinische Kirchenpolitik unter Kaiser Anastasius I, Wohlau, 1888.

20 Հ. Գելցեր, Համառոտություն բյուզանդական կայսրների պատմության, Վաղարշապատ, 1901, էջ 40—42։ Ф. И. Успенский, նշվ. աշխ., էջ 346—348։

21 „История Византии", т. I, М., 1967, էջ 210։

22 Ф. И. Успенский, նշվ. աշխ., էջ 352—353։ Այդ գումարը հավասար էր հինգ կենտնարի ոսկու (Н. В. Пигулевская, Арабы у границ Византии и Ирана в IV—VI вв., М.—Л., 1964, էջ 309)։ Կավատը դրամը տալու էր հեփթաղների թագավորին, որն իրեն օգնել էր գահին վերահաստատվելու համար, մինչդեռ կայսրը կասկածում էր, որ դրանով պարսիկները հեփթաղներին կդարձնեն իրենց դաշնակիցը Բյուզանդիայի դեմ։

հայերին այն բանի համար, որ նրանք չեն երկրպագել կրակին, նա (կայսրը — Վ. Ի.) արհամարհեց նրան (Կավատին — Վ. Ի.) և ոսկի չուղարկեց»[23]։ Այդ հանգամանքն անշուշտ հայերին խրախուսել է և ավելի համարձակ դարձրել Պարսկաստանի դեմ։ «Երբ, — շարունակում է ժամանակագիրը, — Կավատի հպատակ հայերը իմացան, որ հռոմեացիների (բյուզանդացիների — Վ. Ի.) կողմից նրան հաշտ կերպով պատասխան չի տրվել, նրանք ամրացան, զորեղացան և ավերեցին կրակատները»[24]։

Անաստասը Բյուզանդիայում վարել է հայ հոգևորականության համար ընդունելի եկեղեցական քաղաքականություն։ Նա իր նախորդ՝ Զենոն կայսեր հետևելով, քաղկեդոնականության փոխարեն պաշտպանել է միարնակ դավանությունը, որին պատկանում էին նաև հայերը։ Այդ հանգամանքը, ի վերջո, հանգեցրել է հունաց, հայոց, վրաց և աղվանից եկեղեցիների սերտ մերձեցմանը՝ «մի հաւատ բարեպաշտութեան»[25]։ Ուստի, ժամանակակից հայ եկեղեցական գործիչները Անաստաս կայսրին հիշատակում են «զբարեպաշտ և զխաղաղասէր», «երանելոյ քաջ», «ցանկալին հրեշտակաց և մարդկան Անաստասիոս» դրական մակդիրներով։ Զենոն և Անաստաս կայսրերի հիշատակին հայոց եկեղեցին տոն է կատարել[26]։

Անաստասը, փաստորեն խրախուսելով հայերին պարսիկների դեմ, ձգտել է օգտվել նրանց ապստամբությունից, բայց նա ամենևին էլ մտադիր չի եղել ռազմական օգնություն ցույց տալու ապստամբներին։ Կայսրությունը ոչ պատրաստ էր և ոչ էլ մտադիր պատերազմելու Պարսկաստանի դեմ։ Անաստասի արտաքին քաղաքականությունը Բյուզանդիայի բոլոր սահմաններում պաշտպանողական էր[27]։ Իհարկե, այլ կերպ էին մտածել ապստամբ հայերը՝ դեսպանություն առաքելով Բյուզանդիա։ Կայսրության դիրքորոշումը շուտով ակնհայտ է դառնում։ «Բայց, — ասում է Եսու Եդեսացին, — նա (Անաստասը — Վ. Ի.) չցանկացավ նրանց ընդունել, որպեսզի չթվա թե նա (Անաստասը — Վ. Ի.) պատերազմ է հրահրում պարսիկների դեմ»[28]։

Այս բոլորից հետո ամենևին իրավացի չէ պրոֆ. Լևոն, երբ գրում է, թե իբր «Անաստաս կայսրը, համակրելով հայերին և կամենալով օգնել նրանց, վարում էր հակապարսկական քաղաքականություն»[29]։ Կայսրության դիվանագիտության հիմքում միշտ էլ ընկած է եղել Արևելա-հռոմեական պետության և նրա տիրող դասակարգի շահը, մի հանգամանք, որ այլ կապակցությամբ ընդգծել է նաև ինքը՝ պրոֆ. Լևոն։

Հիմնավորված չէ նաև այն տեսակետը, ըստ որի իբր շուտով սկսված պարսկա-բյուզանդական պատերազմի պատճառն Անաստաս կայսեր կողմից հայերին հովանավորելն էր[30]։ Պատերազմի գլխավոր պատճառը, Պրոկոպիոսի

---

[23] Иешу Стилит, էջ 135։

[24] Նույն տեղում։

[25] «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 46, 220—221, 300։ Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 62։ Ուխտանես, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 131։

[26] «Գիրք թղթոց», էջ 328։

[27] „История Византии", т. I, էջ 216։

[28] Иешу Стилит, էջ 135։

[29] Լեո, Նշվ. աշխ., էջ 134։

[30] Տե՛ս Հ. Գալցեր, Համառոտություն բյուզանդական կայսրների պատմության, էջ 42։ Կ. Տեր-Մկրտչյան, Հայոց եկեղեցւոյ պատմութիւն, մաս Ա, էջ 183։ Լեո, Նշվ. աշխ., էջ 133։

վկայությամբ, կայսեր հրաժարումն էր Տիզբոնին նպաստ վճարելուց. «դրա համար էլ Կավատը առանց որևէ առիթի որոշեց արշավել հռոմեացիների վրա»[31]։ Կավատի արշավանքը, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, հետևանք էր Պարսկաստանում գոյություն ունեցող ներքին խոր պատճառների. իսկ նպատակը՝ կողոպուտի միջոցով ձեռք բերել հարստություն, օգտվելով Բյուզանդիայի ներքին ու արտաքին ծանր գրությունից։ Կայսրությունը ամեն կերպ ձգտել է պահպանել խաղաղություն. դաշինքը խախտող և հարձակվող կողմ եղել են պարսիկները[33]։ Հայերի ապստամբությունը կաշկանդում էր պարսիկներին. բայց նրանց օգնելը կարող էր Բյուզանդիային ներքաշել պատերազմի մեջ։ Այդ շահադիտական քաղաքականությունից, ինչպես կտեսնենք, տուժում է նաև ինքը՝ կայսրությունը, զրկվելով հուսալի դաշնակցից Պարսկաստանի դեմ մղած պատերազմում։

Կավատը, օգտվելով հայերի նկատմամբ Անաստասի գրաված անտարբեր դիրքից, ղորք է հավաքագրում ապստամբությունը ճնշելու համար, բայց նա գահազրկվում է դժգոհ մոգության և աղնվականության կողմից ու բանտարկվում Անհուշ բերդում։ Այդ հեղաշրջումը, ինչպես գտնում են, տեղի է ունեցել 496 թ.[34]։ Կավատի փոխարեն չորս տարի գահակալում է եղբայրը՝ Ջամասպը[35]։ Սրա ժամանակ Հայաստանի նկատմամբ պարսկական քաղաքականության մեջ որևէ փոփոխություն տեղի չի ունենում։ Ուստի, այդ տարիներին հայերի ապըստամբությունը հաղթականորեն շարունակվում է և պահպանվում է Հայաստանի անկախ վիճակը։ Ապստամբության ընթացքի մասին դժբախտաբար մենք մանրամասն տեղեկություն չունենք։ Զգիտենք, թե պարսիկներից անկախություն ձեռք բերելուց հետո ինչպես է ընթացել հայ ժողովրդի ներքին կյանքը, ապըստամբներն ինչ միջոցառումներ են անցկացրել երկրում։

Կավատին հաջողվում է փախչել բանտից և հեփթաղների թագավորի օգնությամբ վերահաստատվելով գահին (498 կամ 499 թ.), անհապաղ զբաղվում է հայերի խաղաղեցմամբ։ Նա մի մեծ ղորքի գլուխ անցած շարժվում է Մարզպանական Հայաստան։ «Հայերը, — հաղորդում է Եսու Եդեսացին, — վախենալով, որ նա (Կավատը — Վ. Ի.) վրեժխնդիր կլինի այն բանի համար, որ իրենք մինչ այդ ավերեցին կրակատները, նրան չցանկացան հպատակվել։ Կավատը ղորք հավաքեց և պատերազմեց նրանց հետ։ Նա հաղթեց, բայց չամաչցրեց նրանց (երկիրը — Վ. Ի.). այլ խոստացավ չհարկադրել երկրպագելու կրակին, եթե նրանք դառնան իր օգնականները հռոմեացիների (բյուզանդացիների — Վ. Ի.) դեմ պատերազմում։ Նրանք երկյուղից իրենց կամքին հակառակ համաձայնվեցին»[36]։ Հայերը սկզբում չեն համաձայնվում օգնել պարսիկներին. ի դեմս կայսրության նոր թշնամի ձեռք չբերելու համար։ Բայց Բյու-

[31] Procopius, De bello persico, էջ 34։

[32] Н. Пигулевская, Месопотамия на рубеже V—VI вв., էջ 9, 83։

[33] Иешу Стилит, էջ 149։ Евагрий, Церковная история, СПб, 1858, էջ 162, 175։

[34] А. Крымский, История Сасанидов и завоевание Ирана арабами, Москва, 1905, էջ 59։

[35] Արաբ պատմիչ Տաբարին (X դ.) իր «Մարգարեների և թագավորների պատմությունը» գրքում հաղորդում է, որ Կավատը տապալվել է տասը տարի կառավարելուց հետո՝ 488+10 = 498 թ., տե՛ս А. Э. Шмидт, Материалы по истории Средней Азии и Ирана («Ученые записки института востоковедения», т XVI, էջ 150)։

[36] Иешу Стилит, էջ 136—137։

զանդիան, ինչպես տեսանք, հրաժարվել էր օգնել ապստամբներին։ Հայաստանում վերականգնվում է պարսկական գերիշխանությունը։ Հայոց այրուձին միանում է պարսկական բանակին կայսրության դեմ մղվող պատերազմում։ Պարսիկները, ինչպես գտնում են, հույս ունեին նաև ստանալ Բյուզանդական Հայաստանի օգնությունը, որտեղ հայերի մեջ գոյություն ուներ խոր դժգոհություն բյուզանդական տիրապետության դեմ։ Այստեղ կայսրությունը խախտել էր հայ նախարարների ժառանգական իրավունքները և արտոնությունները[37]։

Ի՞նչն է ճակատամարտում Կավատին հաղթանակ բերել. ռազմական գերազանցությո՞ւնը, թե՞ ապստամբների մեջ առաջացած երկպառակության հետևանքով շարժման թուլացումը. դժվար է ասել։ Ապստամբության դադարեցման գործում, անշուշտ, վճռական նշանակություն է ունեցել Կավատի քաղաքականության փոփոխությունը, առաջին հերթին կրոնական հալածանքի վերացումը։ Այդ մասին տեղեկանում ենք և՛ աւորի ժամանակագրից, և՛ Ներսես Շինողի օրոք բյուզանդացիներին հայերի դրած թղթից[38]։ Այդ փոփոխությունն իր հերթին հետևանք էր ոչ միայն հայերի ապստամբության, այլև Բյուզանդիայի դեմ Պարսկաստանի նախապատրաստվող նոր պատերազմի։ Իրեն օգնելու դիմաց հոներին խոստացված ոսկին կայսրությունից ձեռք բերելու նպատակով Կավատը կարող էր օգտագործել Հայաստանի զինվորական ուժը և նրա ռազմա-ստրատեգիական հարմար գիրքը Բյուզանդիայի վրա հարձակվելու համար։

Եսու Եղեսացին դժբախտաբար չի տալիս հայերի ապստամբության ղեկավարի և նրա որևէ մասնակցի անուն։ 481—484 թթ. Պարսկաստանի դեմ հաղթական ապստամբությունից հետո, ինչպես հայտնի է, Մարզպանական Հայաստանում կառավարում է Վահան Մամիկոնյանը, որպես սպարապետ և մարզպան։ Այնուհետև նրա մասին ուղղակի տեղեկություն չունենք։ Աղբյուրների տվյալների հիման վրա կարելի է միայն ասել, որ Կավատի դեմ ապստամբության ժամանակ ևս երկրում կառավարել է Վահան Մամիկոնյանը։ Այս ենթադրությունը, իհարկե, կհաստատվի այն դեպքում, երբ վերջնականապես որոշվեն սպարապետի մարզպանության տարիները, մանավանդ նրա մահվան թվականը։ 481—484 թթ. պատերազմի պատմության հեղինակ Ղազար Փարպեցին, ինչպես գիտենք, դեպքերի շարադրումը հասցնում է մինչև Վահան Մամիկոնյանի մարզպան դառնալը, որը պատմագրության մեջ նշվում է 484, 485 կամ 486 թվականով և նրա հետագա կյանքի մասին լռում է։ Մեզ հասած միանգամայն վստահելի աղբյուր է Բարկեն կաթողիկոսի «Թուղթ հայոց ի Պարսս, առ ուղղափառս», որտեղ «ութեետասներորդ ամի Կաւատայ արքայից արքայի» (=506 թ.) տակ թվարկած հայ իշխանների շարքում Վահան Մամիկոնյանի անունը չկա։ Այդտեղ առաջինը հիշատակված է նրա եղբայր Վարդ Մամիկոնյանը[39]։ Նույն կաթողիկոսի երկրորդ նամակում ևս տրվում է Վարդ Մամիկոնյանի անունը՝ արդեն որոշակիորեն ընդգծելով նաև նրա պաշտոնը՝ մարզպան լինելը[40]։ Այս բոլորից պետք է հետևցնել, որ Վահան Մամիկոնյանը մա-

37 С. Т. Еремян, նշվ. աշխ., էջ 210—211։

38 Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 232։

39 «Գիրք թղթոց», էջ 42, հմմտ. Ե. Տեր-Մինասյանց, Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորվոց եկեղեցիների հետ, էջմիածին, 1908, էջ 70։

40 «Գիրք թղթոց», էջ 48։

հացել է 506 թ. առաջ և նրա մարզպանությունը քսան տարուց ավելի և 505 թ. հետո չպետք է լինի[41]։

Հովհաննես Դրասխանակերտցու (IX—X դդ.) ասելով, Բաբկեն Ա Օթմսեցի կաթողիկոսը աթոռակալում է հինգ տարի և մահանում։ «Իսկ զկնի սորա զՍամուէլ 'ի գեղջէն Արծկէոյ նստուցանեն յաթոռ հայրապետութեանն. և յորում ժամանակի Վարդ՝ եղբայր Վահանայ, պայազատ, զՀայս։ Եւ սորա ևս կացեալ յաթոռ հայրապետութեան ամս տասն վախճանիւ[42]։ Ըստ Մ. Օրմանյանի Սամուել Ա Արծկեցին աթոռակալել է 516—526 թթ.[43]։

Սամուել Անեցին (XII դ.) Շէ-ի (—507 թ.) տակ ասում է, որ Վահան Մամիկոնյանը կառավարել է ԼԱ (=31 տարի) =507+31=538 թ.)։ Այնուհետև հաղորդելով մարզպանի մահվան և Վարդ եղբոր հաջորդելու մասին, ցույց է տալիս ՇԼԸ (—538) թվականը[44]։ Ըստ Մ. Օրմանյանի սա ակնհայտ սխալ է և քանի որ նույն ժամանակագրի մոտ Քաղկեդոնի ժողովը 451 թ. փոխարեն դրված է 471 թ., ուստի վերոհիշյալ տարեթվից ևս պետք է հանենք քսաներկու տարի և կստանանք Վահան Մամիկոնյանի մարզպանության ճիշտ սկիզբը 485 թ.[45]։ Այդ հաշվով նա մարզպան է եղել մինչև 516 թ. (485+31)։

Ըստ Սխիթար Անեցու (XIII դ.) մարզպան են եղել «Վահան՝ ամս Լ։ Վարդ ամս Դ»[46]։ Ո՞ր թվականն է պատմիչը ընդունում Վահանի մարզպանության սկիզբը, հայտնի չէ։

«Յամս Կաւաաայ՝ արքայի Պարսից, — հաղորդում է Ստեփանոս Օրբելյանը (XIII դ.), — ի մարզպանութեանն Հայոց Վահանայ Մամիկոնեանոյ. և ի հայրապետութեան Տեառն Մուշէի կաթողիկոսի վախճանի երանելի եպիսկոպոսն Սիւնեաց Մուշէ կալեալ զաթոռն ամս 36»[47]։ Այստեղից երևում է, որ Վահան Մամիկոնյանը Կավատ թագավորի օրոք եղել է կենդանի և մարզպան։ Մեղ հայտնի է, որ պատմագիր Ղ. Փարպեցին գնացել է Սյունիք և հյուրընկալվել Մուշե եպիսկոպոսի կողմից[48]։ Սյունյաց Մուշե եպիսկոպոսը մասնակցել է Դվինի ժողովին (506 թ.)[49] և մահացել Վահան Մամիկոնյանի մարզպանության ժամանակ։ Նշանակում է, առնվազն մինչև 506 թ. Վահանը կենդանի է եղել։ Պատմիչի վերոհիշյալ վկայության մեջ, անշուշտ, անախրոնիզմ է Մուշե կաթողիկոսի անվան հիշատակությունը, որը աթոռակալել է 526—534 թ.։

Վարդան Արևելցին (XIII դ.), ի մի բերելով մատենագիրների տվյալները, հաղորդում է, որ նրանցից «Զվահան կէսք քսան ամ և կէսք երեսուն և մի ասեն կացեալ իշխան»[50]։

---

41 Մ. Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 500։

42 Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 63։

43 Մ. Օրմանյան, նույն տեղում, էջ իա։

44 Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց սինչեւ ի ներկայս, Վաղարշապատ, 1893, էջ 72, 74։

45 Մ. Օրմանյան, նույն տեղում, էջ 471։

46 Մխիթար Անեցի, Պատմութիւն, Պետերբուրգ, 1879, էջ 9։

47 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 72—73։

48 Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, էջ 187։

49 Այդ մասին տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, էջ 464։

50 Տե՛ս Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 80։

Պատմաբանները և բանասերները Վահան Մամիկոնյանի մարզպանության տևողության տարբեր թվականներ են նշում. մինչև 505[51], 510 թ.[52]։

Այդպիսով, բոլոր դեպքերում ընդունվում է, որ Վահան Մամիկոնյանը ապրել է և մարզպան եղել առնվազն մինչև 505—506 թ.։ Նշանակում է՝ Կավատի դեմ Արևելյան Հայաստանի ապստամբության ժամանակ նա է եղել մարզպանը, հետևաբար նաև ազատագրական շարժման ղեկավարը, իսկ այնուհետև՝ Բյուզանդիայի դեմ մղած պատերազմին պարսկական բանակի հետ մասնակցած հայկական գնդի հրամանատարը՝ նրա եղբայր Վարդ Մամիկոնյանը։ Այս միանգամայն հավանական տեսակետն ընդունվել է մի շարք ուսումնասիրողների կողմից[53], չնայած նրա վերջնական պարզաբանման համար անհրաժեշտ են նոր հավաստի պատմական փաստեր։

Կավատը, հպատակեցնելով Արևելյան Հայաստանը, ոչ միայն իր համար ապահով թիկունք է ստեղծում, այլև հայերից զորք է ստանում Բյուզանդիայի դեմ մղած պատերազմում։ Հայաստանը դառնում է ռազմական գործողությունների թատերաբեմ և անլուր ավերածությունների է ենթարկվում թե՛ բյուզանդական և թե՛ պարսկական զորքերի կողմից։

502 թ. օգոստոսին Կավատը, խախտելով 422 թ. կայսրության հետ կնքած հարյուրամյա հաշտությունը, մեծ բանակով Մարզպանական Հայաստանի վրայով անսպասելիորեն ներխուժում է Արևմտյան Հայաստան և պաշարում նրա վարչական կենտրոն Թեոդոսուպոլիսը (Կարինը)։ Երկրամասի բյուզանդական կառավարիչ, սենատոր Կոստանդինը, որը թշնամի էր կայսեր, քաղաքը հանձնում է պարսիկներին և ծառայում նրանց։ Կավատը կողոպտում է քաղաքը, այրում, մինչև հիմքերը ավերում, ամայացնում նաև հյուսիսային կողմի բոլոր բնակավայրերը, իսկ բնակչությանը գերեվարում Պարսկաստան[54]։ Թեոդոսուպոլիսը կայսրությանն է անցնում նորից 502 թ. նոյեմբերին, երբ Մելիտինեի դուքս Եվգենիոսը գրավում է քաղաքը և ոչնչացնում այնտեղ գտնված պարսիկներին։

Կավատը, օգտվելով կայսրության դիմադրության թուլությունից, Թեոդոսուպոլսից շարժվում է հարավ-արևմուտք և Հյուսիսային Միջագետք արշավելու ճանապարհին անխնա կերպով կողոպտում, ամայացնում և գերեվարում է «Աղել, Սուֆ, Աթմենիա և Արաբը»[55], այսինքն Անգեղը, Ծոփքը, Արև-

---

51 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 561։ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ե, էջ 12։

52 Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 236, Ստ. Պալասանյան, Պատմութիւն Հայոց, էջ 213։

53 Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 231—236։ Կ. Տեր-Մկրտչյան, Հայոց եկեղեցւոյ պատմութիւն, մաս Ա, էջ 183—184։ Լեո, նշվ. աշխ., էջ 133—134, С. Т. Еремян, նշվ. աշխ., էջ 210 և այլն։

54 Այդ մասին նաև եղեսացուց բացի տե՛ս Theophanes, Chronographia, t. II, էջ 144։ Хроника Захарии Ритора (տե՛ս П. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР, М.—Л., 1941, էջ 150). Procopii, De bello Persico, I, 7, Евагрий, Церковная история, էջ 175, 182։ Վերջինս օգտվել է Եվստաֆիոսի «Եկեղեցական պատմություն»-ից, որտեղ մանրամասն խոսվել է Թեոդոսուպոլսի գրավման մասին մասին, բայց որը մեզ չի հասել, Միխայել Ասորի, ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1871, էջ 216. Պարսկա-բյուզանդական այս պատերազմի պատմությունը ենթարկվել է առանձին քննարկման, տե՛ս Merten, De bello Persico ab Anastasio gesto, Lipsiae, 1905.

55 Иешу Стилит, էջ 143։

մրտյան Հայաստանը ու Մծբինից արևմուտք գտնված Արար անունով նահանգը[56]։

Ծոփքի Թեոդոս հայ նախարարը, որի աթոռանիստը Նփրկերան էր, պարսկական մեծ բանակից սարսափած, իր երկիրը նրա ավերածությունից փրկելու համար, մանավանդ հաշվի առնելով քաղաքի վատ պաշտպանվածությունը, ճոխ ընծաներով ընդառաջ է դնում Կավատին, հպատակություն հայտնում և խոստանում իր ծառայությունը։ Սատրապն իր հետ էր վերցրել նաև կայսրության վճարվելիք երկու տարվա պետական հարկը[57]։ Կավատը Ծոփքն ընդունում է իր տիրապետության տակ, Թեոդոսին թողնում իր պաշտոնին, իսկ գավառն ազատում է ամայացումից։ Հետագայում երբ Ծոփքը նորից անցնում է բյուզանդական գերիշխանության տակ, Թեոդոսը Անաստաս կայսեր կողմից չի պաշտոնազրկվում կամ դատապարտվում, այլ խրախուսվում է նրա գործունեությունը որպես նման պայմաններում կայացրած խելամիտ որոշում[58]։

Այնուհետև Կավատի բանակի ասպատակությունների ասպարեզ է դառնում Հյուսիսային Միջագետքը, որտեղ 502 թ. հոկտեմբերին պարսիկները պաշարում են Ամիդը (Դիարբեքիրը), կայսրության գլխավոր ամրոցը Միջագետքում, և երեքամսյա կատաղի գրոհներից հետո գրավում են և գիմագրելու համար արյունահեղ դատաստան տեսնում նրա քաղաքացիների հետ։ Քաղաքը կողոպտվում է, իսկ բնակչությունը՝ սրի քաշվում և գերեվարվում։ Ամիդի պաշարմանը և ընդհանրապես Միջագետքում տեղի ունեցող ռազմական գործողություններին մասնակցում է Մարզպանական Հայաստանի նախարարական զորքը Վարդ Մամիկոնյանի հրամանատարությամբ[59]։ Կավատը Ամիդում կոտորում է «անձինս ութսուն հազար, և զայլսն գերեցին. բայց միայն զի մեծ եկեղեցին լցեալ էր ժողովրդեամբ, խնդրեաց զօրագլուխն Հայոց և թողաւ այն»[60]։ Ամիդը նաև հայերով բնակեցված քաղաք էր, մի հանգամանք, որն, անշուշտ, հիմք է տվել հայ զորավարին միջնորդելու Կավատի առաջ գոնե եկեղեցում պատսպարվածներին կոտորածից փրկելու համար։ Կավատը ձմեռում է Ամիդում, իսկ նրա առանձին զորամասերը ասպատակում են Բյուզանդական Միջագետքը և Ասորիքը։

503 թ. օգոստոսին Հյուսիսային Միջագետքում պարսիկները մեծ հաղթանակ են ձեռք բերում բյուզանդական բանակի դեմ։ Կավատի բանակում ճակատամարտին մասնակցում են նաև հայերը[61]։

503 թ. աշնանը Կավատը մեծ զորքով հարձակվում է Եդեսիայի վրա, բայց անհաջող։ Բյուզանդական նոր զորահրամանատար Կելերը պատերազմի ըն-

---

[56] Այդ բոլորի մասին մանրամասն տե՛ս Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. СПб, 1908, էջ 39—41։ Н. Пигулевская. Месопотамия на рубеже V—VI вв., էջ 94—95։

[57] Procopii, De aedificiis, I, 3. էջ 248։ Սատրապական Հայաստանի նախարարները բյուզանդական կայսրին վճարել են այսպես կոչված aurum coronarium—«թագի կամ պսակի ոսկի»։ Անաստաս կայսեր մի հրովարտակից (496 թ.) երևում է, որ Արևմտյան Հայաստանում գանձվել են այսպես կոչված τα στεφανικα σημαινομενα «հայկական տուրքեր», հարկեր, Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 115—116։ Ա. Սամուելյան. Հին հայ իրավունքի պատմություն, հատ. I, էջ 225։

[58] Procopii, նույն տեղում։

[59] Մ. Զամբյան, նշվ. աշխ., էջ 232։

[60] Միխայել Ասորի, էջ 216—217։

[61] Иешу Стилит, էջ 159։

թացքը փոխում է հօդուտ կայսրության։ Նրա բանակը, հետապնդելով փախուստի մատնված պարսիկներին, անխնա կողոպտում, դերեվարում և ամայացնում է անցած տերիտորիաների բնակավայրերը։ Բյուզանդացիների այդ մոլեգին դատաստանից զերծ չի մնում նաև Մարզպանական Հայաստանը, ուր արշավում է Արիորինդ զորավարը։ «Արիորինդը, — վկայում է Եսու Եղեսացին. — վերցրեց իր զորքը և գնաց Պարսկական Հայաստան, նա հայերից և պարսիկներից կոտորեց 10.000 տղամարդ, դերեց 30.000 կին ու երեխա, կողոպտեց և այրեց շատ գյուղեր։ Երբ նրանք շրջվեցին Ամիդի վրա գնալու, նա վերցրեց 120.000 ոչխար, եղներ և (այլ — Վ. Ի.) անասուններ»[62]։ Այս իրադարձության և տարեթվի մասին տեղեկություն է հաղորդում նաև Միխայել Ասորին. «Ի քսան և երկու ամին Անաստասայ առաքեցաւ 'ի նմանէ զօր յաշխարհն Հայոց, և արարին զնոսա ընդ ինքեամբք՝ 'ի բաց կալ 'ի Պարսից. իսկ Անաստաս թագաւորեալ քսան և եւթն ամ, մեռաւ 'ի քսան և ինն Թամուզ ամսոյ»[63]։ Արիորինդը, ինչպես գտնում են, Հայաստան է արշավել 504 թ. ամռանը[64]։

Բյուզանդացիները Մարզպանական Հայաստանում գործադրած իրենց դաժանություններով, անշուշտ, վրեժխնդիր էին լինում հայերից՝ պարսիկներին ցույց տված նրանց օգնության համար։

Բյուզանդական շատ զորամասեր, պարսիկների դեմ պատերազմական գործողություններ վարելով Միջագետքում և Մարզպանական Հայաստանում, այնուհետև ձմեռում էին Արևմտյան Հայաստանում, քիչ հոգսեր չպատճառելով հայ բնակչությանը։

Պարսկաստանի դեմ հետագայում ձեռք բերած հաղթանակները նորից են բարձրացնում կայսրության հեղինակությունը։ Հայերը, ինչպես նաև արաբները երես են դարձնում պարսիկներից ու անցնում Բյուզանդիայի կողմը։ Դրանցից էր Մուշեղ զորավարը։ «Մուշեղը, — ասում է Եսու Եղեսացին, — որը պարսկահպատակ հայ էր, իր ամբողջ զորքով հանձնվեց և ենթարկվեց հոռոմեացիներին (բյուզանդացիներին — Վ. Ի.)»[65]. Ո՞վ էր այս Մուշեղը. դժվար է ասել։ Թերևս միակ հայն է, որին անունով հիշատակում է ասորի ժամանակագիրը։ Մարզպան Վահան Մամիկոնյանի եղբայր Վարդը իր այրուձիով անցնում է կայսրության կողմը և մասնակցում պարսիկների դեմ մղած հետագա պատերազմական գործողություններին։

Մանրանում է Պարսկաստանի արտաքին դրությունը։ Հյուսիսից նրան ըսպառնում են հոները։ 506 թ. Մծբինի մոտ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև կնքվում է յոթամյա հաշտության պայմանագիր, ըստ որի վերականգնվում է մինչպատերազմական դրությունը։ Կայսրությունը նորից համաձայն-

---

62 Նույն տեղում, էջ 161։ Մ. Չամչյանը, մատնացույց անելով Եսու Եղեսացուն, գրում է, որ իբր Արիորինդը «զիմեալ ի կռղմանս Զորրորդ Հայոց՝ կոտորեաց ի պարսից և ի Հայոց տասն հազար այր» (նշվ. աշխ., էջ 235)։ Ժամանակագրի մոտ, ինչպես տեսնում ենք, իրականում ասված է «պարսկական (Մարզպանական — Վ. Ի.) Հայաստան»։ Պրոֆ. Լեոն, ծանոթ չլինելով Եսուի ժամանակագրությանը, իր հերթին սխալմամբ ասում է, թե Պարսկական Հայաստան արշաված բյուզանդական բանակի մասին մենք տեղեկություն չունենք (նշվ. աշխ., էջ 135)։

63 Միխայել Ասորի, էջ 218։

64 Н. Пигулевская, Месопотамия на рубеже V—VI вв., էջ 120—121։

65 Нешу Стилит, էջ 162։

վում է պարսիկներին վճարել ամենամյա դրամական դումար կովկասյան ամրությունների պահպանման համար։

Բյուզանդական բանակը Մարզպանական Հայաստանում մնացել է մինչև 506 թ. ամառը։ Կայսրության այդ երեքամյա տիրապետությունը երկրի և ժողովրդի համար հանդիսացել է ծանր կեղեքման ու կողոպուտի, մարդկային նորանոր կորուստների և ավերածությունների մի մռայլ շրջան։

Այդ ժամանակ էլ, ինչպես կարծում են, մահացել է Վահան Մամիկոնյանը և մարզպան դարձել՝ նրա Վարդ եղբայրը[66]։ Վերջինս պարսիկների դեմ մղած պատերազմին մասնակցելու համար կայսրությունից ստացել էր դատրիկի աստիճան։ Պրոֆ. Լեոյի ենթադրությամբ հավանաբար հենց 506 թ. պարսկա-բյուզանդական «...դաշնագրական համաձայնության հետևանքով էր, որ պարսից կառավարությունը Վարդ Մամիկոնյանին մարզպան նշանակեց իր տիրապետության տակ անցած Հայաստանի վրա[67]։ Նա մարզպանի և սպարապետի պաշտոնները վարում է չորս տարի։ Վարդ Մամիկոնյանի մահից (509 թ.) հետո Հայաստանի կառավարումը Տիզբոնի արքունիքը հանձնում է պարսիկ մարզպաններին։

Արևելյան Հայաստանում վերահաստատվում է Պարսկաստանի տիրապետությունը, բայց ազատագրական պայքարն ապարդյուն չի անցնում։ V դարի վերջի ապստամբության դերը մեծ է երկրի պատմական կյանքում։ Նա ձախողեց հայ ժողովրդին պարսիկների հետ միաձուլելու և նրա ազգային ինքնուրույն գոյությանը վերջ տալու Տիզբոնի արքունիքի ենթադրությունը։ Վերականգնվեց և պահպանվեց Նվարսակի պայմանագրով հաստատված Մարզպանական Հայաստանի ներքին ինքնավարական իրավունքը։

Այդ հաղթանակը հայ ժողովրդին հնարավորություն տվեց նաև ապագա խաղաղ ստեղծագործական կյանքի մի երկարատև ժամանակաշրջանի համար։ Մինչև VII դարի 60—70-ական թվականները, ինչպես ցույց են տալիս սկզբնաղբյուրները, Հայաստանում տեղի չի ունենում որևէ նոր ազատագրական շարժում։ Պարսիկ բռնակալները չեն համարձակվում խախտել երկրի՝ զենքի ուժով նվաճված ներքին ինքնավարական իրավունքը։

ВОССТАНИЕ В МАРЗПАНСКОЙ АРМЕНИИ ПРОТИВ ПЕРСИИ И ВИЗАНТИЯ (КОНЕЦ V В. И НАЧАЛО VI В.)

В. К. ИСКАНЯН

(Резюме)

Статья посвящена изучению истории повстанческого движения в Марзпанской Армении против Персии в 492—499 гг. Восстание явилось результатом усиливающегося в Марзпанской Армении персидского гнета, в частности религиозного преследования армян, во время царствования Кавада (488—531), о чем убедительно говорят сведения си-

66 Կ. Տեր-Մկրտչյան, Հայոց եկեղեցւոյ պատմութիւն, մաս Ա, էջ 184։
67 Լեո, Նշվ. աշխ., էջ 135։

рийских (Пешу Стилит) и армянских историков («История Себеоса», Степанос Асогик, Товма Арцруни).

В связи с восстанием излагается также история армяно-византийских отношений с конца V в. до начала VI в.

Значение этого восстания в исторической жизни страны огромно. Оно и на этот раз провалило ассимиляторскую политику персов, проводившуюся в отношении армян, и восстановило в Марзпанской Армении внутреннюю автономию и самостоятельность армянских феодальных княжеств-нахарарств.